ՆԱԽԱԳԻԾ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«___» _____ 2014թ. N_____-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի N 538-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է***.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 31-ի «Աշխատողի աշխատանքի ընդունումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին գրավոր հրամանի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) փաստն արձանագրելու կարգը սահմանելու մասին» N 538-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Աշխատողի աշխատանքի ընդունումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի բացակայության) փաստն արձանագրելու կարգը և արձանագրության ձևը սահմանելու մասին».

2) որոշման հիմքում ««Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի հինգերորդ պարբերությունը» բառերը փոխարինել ««Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասը» բառերով.

3) որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Սահմանել՝

1) աշխատողի աշխատանքի ընդունումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի բացակայության) փաստն արձանագրելու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) աշխատողի աշխատանքի ընդունումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի բացակայության) փաստի վերաբերյալ արձանագրության ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:».

4) որոշման հավելվածը համարակալել N 1 հավելվածի.

5) որոշմամբ հաստատված կարգում՝

ա. վերնագրում և տեքստում «գրավոր հրամանի և (կամ)» բառերը փոխարինել «անհատական իրավական ակտի կամ» բառերով.

բ. 2-րդ կետում «առանց պայմանագրի» բառերը փոխարինել «հարկային մարմնի կամ լիազորված այլ մարմնի կողմից առանց անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի» բառերով.

գ. 3-րդ և 4-րդ կետերում «գրավոր հրաման», «գրավոր հրամաններ» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել համապատասխանաբար «անհատական իրավական ակտ», «անհատական իրավական ակտեր» բառերով և դրանց հոլովաձևերով.

դ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետ.

«6. Արձանագրությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով իրականացվող ստուգումների արդյունքում ստուգում իրականացնող անձանց կողմից կազմվող ստուգման ակտի անբաժանելի մասն է:».

6) որոշումը լրացնել N 2 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
«____»_____ 20____թ.
N _____-Ն որոշման

«Հավելված N 2
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
«31»հուլիսի 2012թ.
N 538-Ն որոշման

Ձև

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

_____ ___ _____ 20 թ.
(կազմման վայրը)

Համաձայն _____ ___ _____ 20 թ. N _____
(ստուգում իրականացնող պետական կառավարման մարմնի (ստորաբաժանման) ղեկավարը)

հանձնարարագրի՝ աշխատողների աշխատանքի ընդունումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի բացակայության) փաստի (անօրինական աշխատանքի) արձանագրման նպատակով

_____ ☐ ☐ ☐ ☐ ☐ ☐ ☐ ☐
(տնտեսավարող սուբյեկտի անվանումը, գտնվելու վայրը) (հարկ վճարողի հաշվառման համարը)

մոտ _____հասցեում գործող
(փաստացի ստուգում անցկացնելու վայրը)

_____ - ում
(արտադրամասը, առևտրի օբյեկտը, առևտրի իրականացման վայրը և այլն)

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին համապատասխան անցկացված _____
(ստուգման տեսակը)
_____ընթացքում պարզվեց, որ տնտեսավարող սուբյեկտի մոտ աշխատող ստորև նշված _____վարձու աշխատողների աշխատանքի ընդունումը
(թվերով և տառերով)
գործատուի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված չէ (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտը կամ գրավոր պայմանագիրը բացակայում է):

NN ը/կ	Աշխատողի անունը, ազգանունը, հայրանունը	Աշխատանքային պարտականությունների բնույթը (պաշտոնը, մասնագիտությունը)	Անձը հաստատող փաստաթղթի		Ծանոթագրություն
			սերիան	համարը	

(ստուգվող ժամանակաշրջանում՝ նախկինում աշխատողի աշխատանքի ընդունումը ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստն արձանագրելու հանգամանքների նկարագրությունը)

Ստուգում իրականացնող պաշտոնատար անձինք՝

(պաշտոնը, անունը ազգանունը, ստորագրությունը)

(պաշտոնը, անունը ազգանունը, ստորագրությունը)

Ստուգմանը մասնակցած տնտեսավարող սուբյեկտի՝

(պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

(պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

Արձանագրությունն ստուգման N _____ ակտի անբաժանելի մասն է:»

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ **Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**